

Հուշագիր
փոխըմբռնման մասին
Հարավային դաշնային համալսարանի (Դոնի Ռոստով, ՌԴ) և Խաչատուր
Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի միջև (Երևան, ՀՀ)

Ընդհանուր դրույթներ

Սույն հուշագրի առարկա են հանդիսանում Կողմերի միջև կրթության և գիտական հետազոտությունների, հասարակական գործունեության, ակադեմիական շարժունության, ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերի իրականացման ոլորտում համագործակցության ընդհանուր դրույթները: Համագործակցությունն իրականացվելու է սույն Հուշագրում նշված կարգի համաձայն:

Հաշվի առնելով Կողմերի՝ միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնմանը վերաբերող շահագրգռվածությունը, ինչպես նաև կրթության և գիտական հետազոտությունների ոլորտում առկա ընդհանուր նպատակները՝

Հարավային Դաշնային Համալսարանը (այսուհետ՝ «ՀԴՀ»)

Բոլշայա Սադովայա փ., 105/42, 344006, ք. Դոնի Ռոստով, Ռուսաստանի Դաշնություն

ի դեմս ռեկտորի ժ.պ. Իննա Կոնստանտինի Շևչենկոյի, որը գործում է կանոնադրության համաձայն,

և

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (այսուհետ՝ «ՀՊՄՀ»)

Տիգրան Մեծի 17, 0010, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

ի դեմս ռեկտոր Ռուբեն Կառլենի Միրզախանյանի, որը գործում է կանոնադրության համաձայն

(այսուհետ՝ «Կողմեր»), ստորագրեցին սույն Համաձայնագիրն՝ ելնելով Կողմերի բարի կամքից և ղեկավարվելով փոխշահավետ համագործակցություն սկսելու նպատակով:

Հոդված I

Սույն Հուշագրի նպատակների իրականացման համար Կողմերը պատրաստակամություն են հայտնում համագործակցել միմյանց հետ (համագործակցության բովանդակությունը կմշակվի առաջիկայում) հետևյալ ոլորտներում.

• ուսանողների, գիտական աշխատողների, ասպիրանտների, դոկտորանտների փոխանակում,

- Կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող գիտական ոլորտներում համագործակցության նախաձեռնում,

- աջակցություն՝ դասախոսների և գիտական աշխատողների որակավորման բարձրացման ոլորտում,

- փորձի փոխանակում կրթության ժամանակակից մեթոդաբանության ոլորտում,

- իրականացված հետազոտությունների նյութերի և հրատարակությունների փոխանակում,

- համատեղ սինպոզիումների, սեմինարների, գիտաժողովների կազմակերպում,

- համատեղ կրթական և գիտական ծրագրերի իրականացում (Կողմերի շահագրգռվածության դեպքում),

- Համագործակցող բուհին վերաբերող տեղեկատվության տարածում այն երկրներում, որոնք ներկայացնում են Կողմերը:

Հոդված II

Կողմերը պայմանավորվել են համատեղ ջանքերով զարգացնել համագործակցության տարբեր ձևերը, այդ թվում՝ միջհամալսարանական ծրագրերի և նախագծերի մշակումը, Կողմերի միջև առանձին ոլորտներում անմիջական շփման հաստատումը՝ ելնելով Կողմերի առանձին կառուցվածքային ստորաբաժանումների և գիտական աշխատողների՝ փոխադարձաբար ընդունելի շահերից:

Հոդված III

Կողմերը համաձայն են ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Կողմերի՝ միմյանց ուղղվող անհատական հրավերների հիման վրա իրականացվող միջհամալսարանական շարժունության ծրագրերում բոլոր դասախոսների, գիտական աշխատողների և ուսանողների մասնակցությունն ապահովելու համար: Նշյալ հրավերներն ուղղելիս Կողմերը հաշվի են առնում նաև բոլոր հավելյալ պայմանները՝ անհրաժեշտ ծախսերը, ներքին հնարավորությունները, միգրացիոն սահմանափակումները և այլն:

Հոդված IV

Կողմերը համաձայն են իրականացնել համագործակցությունը պայմանների համաձայնեցմանը, բովանդակությանը և համագործակցության մասնակիցներին վերաբերող պայմանագրի կնքումից հետո համալսարանները ներկայացնող լիազորված անձանց կողմից ստորագրված Կարգավորող փաստաթղթերի հիման վրա:

Հոդված V

Համատեղ հետազոտական աշխատանքների արդյունքները հանդիսանում են երկու Կողմերի սեփականություն, դրանց հետագա յուրացման և/կամ կիրառման կարգը պետք է համաձայնեցվի նախագծի ավարտից հետո՝ հաշվի առնելով Կողմերի շահերը: